ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 120-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Սույն թվականի ապրիլի 5-ին ՀՍՍՀ ԳԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում տեղի ունեցավ գիտաժողովի ընդլայնված նիստը՝ նվիրված մեծանուն գիտնական Մանուկ Աբեղյանի ծննդյան 120-ամյակին։

Նիստը ներածական խոսքով բացեց ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի դիրեկտոր, ակադեմիկոս Էդվարդ Ջրբաշյանը։ Անդրադառնալով մեծ գիտնականի գիտական ժառանգության պատմական և արդիական նշանակությանը, նա ասաց. «Աբեղյանի առաջադրած դրույթները, որոնք վերաբերում են հայ բանասիրության բոլոր բնագավառներին, իրենց մեջ պարունակում են փաստական և գիտական պրոբլեմային այնպիսի մեծ լիցք, որը դեռ երկար ժամանակ ի վիճակի է ազդակ լինելու հայագիտության հետագա զարգացման համար։ Նույնիսկ այն դեպքերում, երբ մենք այսօր, այս կամ այն հարցում, համաձայն չենք մեծ գիտնականի որևէ հարցադրման հետ, նրա ժառանգությունը դարձյալ անփոխարինելի հենարան է մեզ համար հայ գրականագիտության, լեզվաբանության, բանագիտության և տաղաչափության հարցերը ստեղծագործաբար մշակելու գործում։ Աբեղյանի գիտական երկերը եղել են և երկար ժամանակ կմնան անհրաժեշտ մի դպրոց, որով պետք է անցնի ամեն մի հայագետ»։

«Աբեղյանի գիտական ժառանգության հրատարակությունները և հետագա անելիքները» թեմայով զեկուցեց ինստիտուտի բնագրագիտության բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Պիոն Հակոբյանը։ Հանգամանորեն վերլուծելով Մ. Աբեղյանի աշխատությունների 8 հատորների կառուցվածքն ու բովանդակությունը, որոնց մեջ ընդգրկված են մեծ հայագետի ինչպես հիմնաքարային հետազոտություններ, այնպես էլ հայագիտության պատմության մեջ բացառիկ դեր խաղացած մանր հետազոտությունները, կանացան մատենախոսությունները, բանավիճային հոդվածներն ու աշխատությունները, հուշերն ու դիմաստվերները, Պ. Հակոբյանը նշեց, որ գիտական այս հրակայածավալ ժառանգության բնագրերի պատրաստումն ու հրապարակումը ինստիտուտն իրականացրել է 1966—1985 թթ. ընթացքում։ Հատորների ընդհանուր ծավալը կազմում է 300-ից ավելի հեղինակային մամուլ, ըստ որում՝ մի շարք աշխատություններ հանրության սեփականությունը դարձան այս հրատարակության միջոցով («Հայ վիպական բանահյուսություն», «Մի քանի բերականական խնդիրների մասին», «Հայ ժողովրդական վեպի համահավաք բնագրի մասին» և այլն)։

Աբեղյանի գիտական ժառանգության հրատարակության և հետազոտության գործը, սակայն, այսքանով չի ավարտվում։ Դեռ հրատարակության են սպասում Աբեղյանի կազմած գիտաբանական բնագրերը բանասիրական հանգամանալից մեկնաբանություններով հանդերձ («Գուսանական ժողովրդական տաղեր, տայրեններ և ա՛տունիներ», «Ժողովրդական խաղիկներ», Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», Կորյունի «Վարք Մաշտոցի» երկը և այլն), բառարանագիտական աշխատությունները, Աբեղյանի և Կոմիտասի ընդհանուր ջանքերով կազմված «Հազար ու մեկ խաղ» ժողովրդական երգարանը։ Հարկ է գիտական ժառանգության մի քանի հատորների մեջ ընդգրկել XIX դարի վերջի և XX դարի սկզբի արևելահայ մամուլում Աբեղյանի հրատարակած բազմաթիվ մատենախոսական տեսությունները հայ հին և նոր գրականության, ժողովրդական բանահյուսության, հայոց լեզվի պատմության և տեսության և այլ հարցերի վերաբերյալ, նրա գրական-պատմական տեսությունները՝ «Աշուղների մասին», «Պարոնյանի մասին», «Լոռի», «Հայեր և վրացիներ», «Մեր երկու գրական լեզուների միության խնդիրը», «Բայի եղանակներն արևելյան աշխարհաբարում» և այլն։ Վերջապես «Վարսամ», «Գիսավոր» և այլ ծածկանուններով ու սեփական ստորագրությամբ հրապարակախոսական ելույթները «Նոր-դար», «Արարատ» և այլ պարբերականներում։

«Մանուկ Աբեղյանի բանագիտական վաստակը և արդի հայ բանագիտության մի քանի խնդիրները» թեմայով զեկուցում կարդաց ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական սկզբնաղբյուրների վավերագրման բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր Վարդիս Հարությունյանը։ Մանրամասնորեն ներկայացնելով Մ. Աբեղյանի անցած գիտական ճանապարհը սկսած XIX դարի 80-ական թթ. մինչև XX դարի 40-ական թթ., զեկուցողը ցույց տվեց այն մեծ դերը, որ կատարել է մեծանուն գիտնականը հայ բանագիտության մեջ։ 1880—90-ական թթ. գրած իր մի շարք մեծարժեք աշխատություններով («Հայ ժողովրդական հավատալիքներ», «Հայկական հին առասպելները Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ» և այլն) Մ. Աբեղյանը դառնում է մեզանում բանասիրական բանագիտության հիմնադիրը։ Կիրառելով ուսումնասիրության պատմահամեմատական և բանասիրական

մեթոդները՝ նա հնարավորին չափ վերականգնում է հայ հին առասպելները, ճշգրտում դրանք, բացահայտում է աստվածների և հերոսների դիցաբանական ֆունկցիաները, Մովսես Խորենացու պատմության մեջ հայ հին առասպելաբանական վեպի՝ «Վիպասանքի» գոյությունը։ XX դարի սկզբին Արեղյանը մեծ աշխատանք է կատարում ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրի ստեղծագործությունների դասակարգման, հրատարակության և ուսումնասիրության գործում («Հայ ժողովրդական խաղեր», «Հազար ու մի խաղ», «Հայոց միջնադարյան ասակներ...», «Տեսություն Հայոց հին բանաստեղծության», «Հին գուսանական ժողովրդական երգեր» և այլն), ինչպես նաև շարունակում է հայ ժողովրդական վեպի ուսումնասիրությունը նոր տարբերակների ընձեռած տվյալների օգտագործումով։ Նշված աշխատություններում Արեղյանը քննում է վիպական բանահյուսության և հայ հին գրականության փոխհարաբերության խնդիրը, ցույց է տալիս վիպական բանահյուսության դերն ու ազդեցության չափը հին պատմագրության ձևավորման ու զարգացման վրա, ինչպես նաև նրա ինքնուրույն զարգացման ուղիներն ու միտումները։ Այս թվականներին հրատարակած Արեղյանի բոլոր աշխատությունները մեծ նշանակություն ունեն ոչ միայն գիտական, այլև աղբյուրագիտական տեսակետից։

1930-ական թթ. Արեղյանը մշակում է հայ հին ու նոր վիպական բանահյուսության պատմատիպարանական զարգացման տեսությունը և կազմում է «Սասնա ծռերոս» հերոսավեպի, ժողովրդական իրադիկների և գուսանական-ժողովրդական տաղերի գիտական համահավաք բնագրերը։ Վիպական և քնարական բանահյուսության գլխավոր ռեսակների գիտական բնագրերի ստեղծումը կարևոր առաջընթաց էր հայ բանագիտության պատմության մեջ։

Մեծ գիտնականի մասին հուշերով հանդես եկան Մ. Արեղյանի նախկին ասպիրանտ, բանասիրական գիտությունների թեկնածու Ալիս Մանուկյանը և գիտնականի թոռը՝ ինստիտուտի ֆետաշխատող Հասմիկ Արեղյանը։ Նիստի վերջում ելույթով հանդես եկավ ինստիտուտի հայ նոր գրականության բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Սարինյանը։ Արեղյանի գիտական ժառանգությունը գիտականության փայլուն դպրոց է,— ընդգծեց նա,— որի ավանդները այդ իմաստով ևս պետք է յուրացվեն ժամանակակից գրականագետների կողմից։

Գ. Է. ԳԱՍՊԱՐՅԱՆ